Back to School արշավի շրջանակում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են «Back to School» արշավի շրջանակում իրականացվող խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) կազմակերպման կարգը, պայմաններ և սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինգային միջոցառում:

1.4. Խաղարկության կազմակերպիչն է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.4. Խաղարկությունն անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ.

2.1. Մասնակիցների տարիքային սահմանափակում չկա

2.2. Խաղարկությանը չեն կարող մասնակցել Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 15-ը (ներառյալ) կատարել հետևյալ գործողությունները՝

- Instagram հարթակում նկարահանել ռիլ (Reel), որտեղ մասնակիցը կրկնում է Կազմակերպչի կողմից հրապարակված տեսահոլովակում ներկայացված ժեստը (gesture),

- հրապարակել այն իր անձնական Instagram էջում (էջը պետք է լինի բաց՝ public կարգավիճակով),

- նշել Յուքոմի պաշտոնական ինստագրամյան էջը՝ @ucom_official,

- հրապարակման մեկնաբանություններում գրիր “Մասնակցում եմ”:

3.2. Յուրաքանչյուր մասնակից կարող է Խաղարկությանը մասնակցել մեկ Instagram էջով և մեկ անգամ:

3.3. Խաղարկության արդյունքների ամփոփումից հետո հաղթողներին կուղարկվի անհատական հաղորդագրություն Instagram-ի միջոցով: Հաղթողների մասին տեղեկությունը կհրապարակվի Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջերում:

3.4. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Random.org առցանց հարթակի միջոցով:

3.5. Ընդհանուր հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 3 հոգի: Հաղթողներից յուրաքանչյուրին որպես մրցանակ կտրվի HONOR 400 LITE սմարթֆոն:

3.6 Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող հաճախորդների սպասարկման գրասենյակ՝ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

3.7. Հաղթող ճանաչված մասնակցի կողմից նվերն անձամբ ստանալու անհնարինության դեպքում նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

3.8. Եթե հաղթող ճանաչված մասնակցի 18 տարեկանը լրացած չէ նվերը ստանալու օրվա դրությամբ, ապա վերջինս պետք է ներկայանա օրինական ներկայացուցչի ուղեկցությամբ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ներկայացնել օրինական ներկայացուցիչ հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթը, ինչպես նաև օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը:

3.9. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.10. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

3.11. Կազմակերպիչը պատասխանատու չէ այն դեպքերում, երբ մասնակիցը սխալ է նշել էջը, օգտագործել է փակ (private) հաշիվ կամ խաղարկության պայմանները չեն կատարվել ամբողջությամբ:

4. Խաղարկության ժամկետներ

4.1. Խաղարկությունն անցկացվում է 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 15-ը (ներառյալ):

4.2. Խաղարկության արդյունքները կամփոփվեն մինչև 2025 թվականի սեպտեմբերի 17-ը:

5. Նվերների ցանկ

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
HONOR 400 LITE սմարթֆոն	3

6. Կազմակերպչի տվյալներ

«Յուքոմ» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շենք 8/4

Կայք՝ www.ucom.am

Instagram՝ @ucom_official

Facebook՝ UcomArmenia

Հեռ.՝ +374 (11) 444 444